



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.  
21-րդ դարի մարտահրավերներ  
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:  
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:  
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

**ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

2017 թ., նոյեմբերի 22-24

**Երևան 2018**

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65  
Տ 778

Հրատարակվում է  
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

**Խմբագրական խորհրդի նախագահ՝**

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

**Խմբագրական խորհուրդ՝**

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ
- ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ
- ԱՇՈՏ ՍԱԼԼԱԶԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և  
Տ 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,  
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

## ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապարակապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մտադրում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ  
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

HAYK BEJANYAN

THE ESSENCE AND METHODOLOGICAL BASIS FOR FORMATION  
OF INTEREST RATE POLICY

*Key words:* interest rate policy, commercial bank, credit policy, financial strategy

*In order to disclosure the content of interest rate policy it is necessary to first consider general features of interest rate policy of commercial bank and segregate tasks and objectives specific to interest rate policy.*

*The article presents issues related to the essence and content of interest rate policy term present in economic literature, as well as the principles and theoretical and methodological basis of interest rate policy.*

ԼԻԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, ՀՊՏՀ

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ՝  
ՈՐՊԵՍ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԿՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆ

*Հիմնաբառեր.* ֆինանսական ռիսկ, ֆինանսական կայունություն, սպասումների հավանականություն, վերադարձելիության հնարավորություն, վարկային ռիսկից պաշտպանվածության գործակից, ռիսկի գնահատում

*Հոդվածում ներկայացված է ֆինանսական ռիսկը, բացահայտված է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բնույթը: Վարկային պորտֆելի որակը վերլուծելու և գնահատելու համար արտացոլված է ցուցանիշների համակարգ, որի համալիր վերլուծությունը թույլ է տալիս գնահատել բանկի կողմից իրականացվող վարկային ռիսկի կառավարման արդյունավետությունը:*

Բանկը, որպես ֆինանսական շուկայի բաղկացուցիչ մաս, ներառում է բազմաթիվ ռիսկեր՝ վարկային, օրենսդրական, հաշվապահական, իրացվելիության, արտարժույթային, տոկոսաստորոպի, անվճարունակության և այլն:

Միջազգային փորձում ընդունված են ռիսկերի դասակարգման տարբեր եղանակներ՝ կախված նրանից, թե որ չափանիշն է դասակարգման հիմքում:

Բանկային ռիսկերն ըստ բնույթի լինում են ֆինանսական և ոչ ֆինանսական: Դրանցից յուրաքանչյուրն իր հերթին կարելի է բաժանել մի քանի տեսակների, որոնք, ըստ էության, ներկայացնում են առանձին ռիսկեր: Ռիսկերի տարատեսակները չեն բացառում միմյանց, այլ փոխադարձաբար լրացնում են, ընդ որում, ցանկացած գործառնու-

թյան հետևանքով բանկը կարող է ենթարկվել մի քանի տեսակի ռիսկերի: Ռիսկերի գնահատման և վերլուծության նպատակով դրանք պայմանականորեն բաժանվում են հետևյալ տեսակների.

1. Ֆինանսական բնույթի ռիսկեր՝ վարկային, շուկայական, իրացվելիության,
2. ոչ ֆինանսական բնույթի ռիսկեր՝ գործառնական և բարի համբավի:

Ֆինանսական ռիսկերի բնութագրման և դասակարգման հարցում տեսության մեջ տարբեր կարծիքներ են շրջանառվում, սակայն, միաժամանակ, դրանց բնորոշ են մի շարք ընդհանրություններ:

Նախևառաջ, ֆինանսական ռիսկերը ձևավորվում են տնտեսավարման համակարգում, սերտորեն առնչվում են կազմակերպությունների եկամուտների ու ծախսերի հետ և այդ իսկ պատճառով տնտեսական բնույթ ունեն՝ ի տարբերություն քաղաքական, սոցիալական ռիսկերի: Բացի այդ, ֆինանսական ռիսկերը, ձևավորման ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ բնույթ ունեն՝ չնայած ռիսկային գործարքների իրականացման գծով կառավարիչների կողմից կայացվող սուբյեկտիվ որոշումների: Հետևաբար՝ դրանց ձևավորման հավանականությունը մեծ է տնտեսավարման ցանկացած օղակում ընթացող տնտեսական գործառույթներում, որտեղ տեղի են ունենում եկամուտների բաշխում, վերաբաշխում, օգուտների ձևավորում, ծախսերի իրականացում, ռեսուրսների ներգրավում, տեղաբաշխում, օգտագործում և այլն: Այդ իսկ պատճառով տնտեսավարման օղակների կառավարիչները միշտ գիտակցում են ֆինանսական ռիսկերի ձևավորման հավանականությունը և ձգտում այդ ոլորտը հնարավորինս կառավարելի դարձնել:

Տնտեսավարման համակարգում, այդ թվում՝ բանկային ոլորտում ցանկացած ռիսկ ներկայացվում է կարևորագույն բնորոշումներով՝ հնարավորություններով և հավանական հետևանքներով: Ֆինանսական ռիսկերին հատուկ է նպատակադրումներին հասանելիության հավանականության բնույթը: Ռիսկերի կառավարման գործընթացում անպայման հաշվի է առնվում անորոշության պայմաններում կորուստների ձևավորման, նախանշված եկամուտների թերհավաքագրման, սպասումների և տնտեսական ակնկալիքների լիարժեք չիրականացման հավանականության աստիճանը:

Այսպիսով, ելնելով վերոնշյալ առանձնահատկություններից, կարելի է ֆինանսական ռիսկը սահմանել հետևյալ կերպ.

*Ֆինանսական ռիսկը տնտեսական գործունեության շրջանակներում ընտրության արդյունք է, որն անգամ անբարենպաստ սպասումների հավանականությունը հաշվի առնելով, թիրախավորվում է տնտեսավարման դրական նպատակադրումների հասանելիությամբ, բնորոշվում է դինամիկ փոփոխումներով և ունի գնահատման սուբյեկտիվ բնույթ:*

Ռիսկն իր էությամբ կարևորվում է առևտրային բանկերի գործառույթներում: Ուստի այդ առումով, որպես առաջնային նախապայման, դա առևտրային բանկերի կողմից միջոցներ ներգրավելու գործունեության կարգավորումն է, որը պետք է պայմանավորված լինի ակտիվների և պասիվների կառավարման հստակ կանխորոշված ռազմավարությամբ՝ առանց որի կարգավորման միջոցների ներգրավման քաղաքականությունը կբերի զգալի կորուստների, կամ, հնարավոր է, տվյալ բանկը ստիպված լինի ներգրավված մի-

ջոցների համար վճարել շատ ավելի բարձր գին: Կապված ֆինանսական համակարգում ռիսկի գործոնի շարունակական աճի հետ՝ առավել արդիական է դառնում բանկային ռիսկերի կառավարումը, այսինքն՝ տարբեր մեթոդների կիրառումը, որոնք թույլ կտան կանխատեսել ռիսկային պատահարի ի հայտ գալը և դրա նվազեցման ուղղությամբ քայլերի իրականացումը:

Հակիրճ կերպով տանք առևտրային բանկերի հիմնական ֆինանսական ռիսկերի բնորոշումները:

Վարկային ռիսկն այն բանի հավանականությունն է, որ բանկի վարկառուն կամ այլ պարտապան կխախտի բանկի հետ կնքած պայմանագրի պայմանները կամ չի գործի դրանց համապատասխան, ինչը բացասաբար կազդի բանկի շահույթի և կապիտալի վրա:

Վարկային ռիսկն առկա է այն գործարքներում, երբ «հաջողությունը» կախված է պարտապանի գործունեությունից: Դա ի հայտ է գալիս ամեն անգամ, երբ բանկը միջոցներ է տրամադրում, ներդնում կամ միջոցների տրամադրման վերաբերյալ փաստացի կամ ենթադրվող պայմանագրային հարաբերությունների մեջ է մտնում այլ անձի հետ, որն էլ արտացոլվում է բանկի հաշվեկշռում կամ հանդես է գալիս որպես արտահաշվեկշռային միավոր: Վարկային ռիսկը բանկային գործունեության հետ կապված դյուրին ճանաչվող ռիսկն է, որն առաջանում է ոչ միայն վարկավորման ընթացքում, այլև բանկային բազմապիսի գործառնությունների արդյունքում:

Յուրաքանչյուր բանկ, ելնելով իր առանձնահատկություններից, ֆինանսական շուկայում գրաված դիրքից և իր հաճախորդների առանձնահատկություններից, ինքնուրույն է որոշում իր գործառնությունների ռիսկայնության աստիճանը և դրանց կառավարման մեթոդները:

Առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի կառավարումը դրանց նվազեցմանն ուղղված համալիր գործողությունների համակարգ է, որը ներառում է կանխատեսման, հնարավոր չափերի և հետևանքների որոշման, կորուստների կանխարգելման և նվազեցման միջոցառումների իրականացում:

Այդ ամենը ենթադրում է յուրաքանչյուր բանկի կողմից ֆինանսական ռիսկերի կառավարման ռազմավարության, այսինքն՝ որոշումների ընդունման քաղաքականության մշակում այնպես, որ ժամանակին և հետևողականորեն օգտագործվեն բանկի զարգացման բոլոր հնարավորությունները:

Շուկայականը, վարկայինը, իրացվելիությանը այն հիմնական ֆինանսական ռիսկերն են, որոնց ենթարկվում է բանկը:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են ռիսկերի, վարկերի և ակտիվների ու պարտավորությունների կառավարման կոմիտեի կողմից: Որոշումների կայացման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ստեղծվել է վարկային կոմիտեների աստիճանակարգություն՝ կախված ռիսկին ենթարկվածության չափից և տեսակից: Ռիսկի թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կա-

ռավարվում են կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Հատուկ ուշադրություն է դարձվում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և դրանց նվազեցմանն ուղղված միջոցառումների նպատակահարմարության աստիճանի որոշմանը: Բացի ստանդարտ վարկային և շուկայական վերլուծությունների իրականացումից, ռիսկերի կառավարման վարչությունը վերահսկում է ֆինանսական ռիսկերը՝ կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական բաժինների հետ՝ նրանց մասնագիտական կարծիքը ձեռք բերելու համար:

Անկասկած, բանկերի ստեղծման հիմնական նպատակը հաճախորդների վարկավորումն է, քանի որ դրանց շահույթի ձևավորման հիմնական աղբյուրը վարկային գործառնություններից եկամուտներն են:

Կարելի է ասել, որ վարկավորման գործընթացը բանկի հիմնական գործառույթն է, քանի որ դրանով է պայմանավորված շահույթի մեծ մասի ապահովումը՝ ի հաշիվ վարկային գործառնություններից ստացվող եկամուտների:

Չնայած նրան, որ բանկերը մատուցում են բազմատեսակ ֆինանսական ծառայություններ, իսկ բանկի հաշվեկշռի մոտ 70%-ը կապված է վարկային ռիսկի կառավարման հետ, հետևաբար՝ այդ ռիսկի գնահատումը և կառավարումը բանկի ռազմավարության ու գոյատևման կարևորագույն գործոններն են: Յուրաքանչյուր բանկ, առանց բացառության, ռիսկի է դիմում իր հաճախորդներին վարկեր տրամադրելիս և այդ գործունեության ընթացքում կրում է որոշակի վնասներ՝ կապված վարկառուի կողմից իր պայմանագրային պարտավորությունները չկատարելու հետ:

Այլ կերպ ասած, վարկային ռիսկը ներկա կամ ապագա հավանականություն է, որ բանկի վարկառուն կամ այլ պարտապանը կխախտի կնքված պայմանագրի պայմանները կամ չի գործի դրա պայմաններին համապատասխան, ինչը բացասաբար կազդի բանկի շահույթի և/կամ կապիտալի վրա: Մեկ այլ բնորոշմամբ, վարկային ռիսկը բանկի ակտիվների, ավելի շուտ՝ վարկերի արժեքների նվազման հավանականությունն է, որը կապված է հաճախորդի անվճարունակությամբ պայմանավորված պարտքի կամ դրա մի մասի, այդ թվում՝ պայմանագրով հաշվարկված տոկոսների չվճարման/չվերադարձման հետ:

Բանկի համար առանձնապես կարևորվում է վարկային գործունեության ամբողջ գործընթացի կառավարումը: Որդեգրված վարկային խելամիտ քաղաքականության դեպքում կարելի է ակնկալել հիմնական տոկոսային եկամուտների ստացում, վճարունակության և կայունության ցուցանիշների բարելավում, և հակառակը՝ վարկային ռիսկի կառավարման բնագավառում բացթողումները կարող են դառնալ զգալի կորուստների պատճառ: Չէ՞ որ վատորակ, ռիսկային վարկերի առկայությունը կարող է վտանգել բանկի ֆինանսական կայունությունը՝ սկզբնական շրջանում բանկին կանգնեցնելով իրացվելիության, իսկ այնուհետև անվճարունակության խնդրի առջև:

Ուստի բանկի խնդիրն է նախքան վարկի տրամադրումը իրականացնել խոր վերլուծություններ, գնահատել վարկի վերադարձելիության հնարավորությունները, հնարավոր ռիսկի հավանականությունը: Սակայն, պետք է նշել նաև հանգամանքը, որ վարկային ռիսկ է առաջանում ոչ միայն առանձին վարկառուների գծով, այլև տնտեսական ընդհա-

նուր իրավիճակի վատթարացման, տնտեսության առանձին անհեռանկարային ճյուղերի անկման, բանկի հետ փոխկապակցված անձանց չարաշահումների և այլ հետևանքներով:

Այս առումով, կարևորվում է վարկային պորտֆելի բազմազանեցումն ըստ տնտեսության ճյուղերի, հաճախորդների խմբերի ու վարկատեսակների: Ընդ որում, որքան բարձր է բազմազանեցման մակարդակը, այնքան ցածր է պորտֆելային ռիսկի մակարդակը:

Վարկային ռիսկի կառավարման գործընթացում կարևորվում է վարկային պորտֆելի ռիսկի գնահատումը, որի արդյունքում բացահայտվում են առկա թերությունները և հնարավորություն է ընձեռնվում միջոցներ ձեռնարկելու դրանց վերացման ուղղությամբ: Վարկային պորտֆելի որակը վերլուծելու և գնահատելու համար օգտագործվում է ցուցանիշների համակարգ, որի համալիր վերլուծությունը թույլ է տալիս գնահատել բանկի կողմից իրականացվող վարկային ռիսկի կառավարման արդյունավետությունը:

Վարկային պորտֆելը վերլուծության են ենթարկում որոշակի ցուցանիշների և չափանիշների հիման վրա, ընդ որում, յուրաքանչյուր բանկ սահմանում է իր ցուցանիշները և չափանիշները, սակայն կան պահանջներ, որոնք ընդհանուր են բոլոր բանկերի համար, մասնավորապես՝ դա վերաբերում է ռիսկերի կառավարմանն առնչվող խնդիրներին:

Ըստ վարկային ռիսկի՝ վարկերը դասակարգվում են որպես ստանդարտ, հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի:

Բանկի վարկային պորտֆելի որակը բնութագրող ցուցանիշներից է հսկվող վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելի համալիր ծավալում: Հսկվող են համարվում այն վարկերը, որոնք ամբողջությամբ համապատասխանում են ստանդարտ վարկերի սահմանմանը, սակայն դրանց հիմնական պարտքի կամ տոկոսների վճարումն ուշացել է սահմանված ժամկետից մինչև 90 օր:

$$K_1 = \frac{\text{Հսկվող վարկեր}}{\text{Բանկի վարկային պորտֆելի ծավալ}} * 100\% \quad (1)$$

Այս գործակցի նվազումը ահազանգ է բանկին հաճախորդներին, որոնց պատկանում են առավել խոշոր վարկեր, ֆինանսական վիճակի նկատմամբ հսկողության էֆեկտիվությունը մեծացնելու անհրաժեշտության մասին:

Հաջորդ ցուցանիշը ոչ ստանդարտ վարկերի տեսակարար կշիռն է վարկային պորտֆելի համալիր ծավալում:

Ոչ ստանդարտ են այն վարկերը, որոնց պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում՝ կախված փոխառուի ֆինանսական վիճակից կամ պարտքը մարելու ունակությունից: Այստեղ ներառվում են 91-180 օր չափսատող վարկերը:

$$K_2 = \frac{\text{Ոչ ստանդարտ վարկեր}}{\text{Բանկի վարկային պորտֆելի ծավալ}} * 100\% \quad (2)$$

Հաջորդ ցուցանիշը կասկածելի վարկերի տեսակարար կշիռն է բանկի վարկային պորտֆելի համալիր ծավալում:



Կասկածելի վարկերն ունեն ոչ ստանդարտ վարկերի բոլոր հատկանիշները, սակայն առավել խնդրահարույց են, ինչի արդյունքում դրանց հավաքագրումը տվյալ պահին դառնում է չափազանց դժվար կամ անհնար: Այստեղ ներառվում են 181-270 օր ժամկետով չաշխատող վարկերը:

$$K_3 = \frac{\text{Կասկածելի վարկեր}}{\text{Քանակի վարկային պորտֆելի ժամկետ}} * 100\% \quad (3)$$

Անհուսալի վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելի համալիր ծավալում որոշվում է հետևյալ կերպ:

$$K_4 = \frac{\text{Անհուսալի վարկեր}}{\text{Քանակի վարկային պորտֆելի ժամկետ}} * 100\% \quad (4)$$

Անհուսալի են անհավաքագրելի և ամբողջությամբ արժեզրկված վարկերը, որոնց հաշվառումը հաշվեկշռում այլևս նպատակահարմար չէ: Այս դասակարգումը չի նշանակում, որ վարկը հնարավոր չէ վերականգնել ապագայում, սակայն տվյալ պահին նրա հաշվապահական ճանաչումը պետք է լինի որպես արժեզրկված ակտիվ: Այստեղ ներառվում են 271 օր և ավելի ժամկետով չաշխատող վարկերը:

Վերը նշված ցուցանիշներն արտահայտում են անորոշության աստիճանը ղեկավարման որոշումներ կայացնելիս, արտացոլում են վարկային պորտֆելի կառուցվածքը՝ հանդես գալով որպես բանկի վարկային ռիսկի որակական բնութագրեր:

Ընդհանուր առմամբ, գոյություն ունի վարկերի կորուստները չեզոքացնելու երեք աղբյուր՝ շահույթ, կապիտալ և վարկերի հնարավոր կորուստների պահուստ: Ուստի անհրաժեշտ է, որ բանկը ձևավորի իր վարկային պորտֆելին համարժեք վարկերի հնարավոր կորուստների պահուստ: «Քանակային համակարգում պահուստավորումն իրականացվում է ըստ ԿԲ և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համատեղ հաստատված՝ «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման» կարգի: Այդտեղ ներկայացված են դասակարգված վարկերի գծով պահուստավորման ենթակա գումարի նվազագույն չափերը և նախատեսված են ավելի խիստ պայմաններ, որոնք բանկերը կարող են կատարել:

Վարկերի հնարավոր կորուստների պահուստը գնահատելու համար գոյություն ունեն մի շարք գործակիցներ: Դրանցից մեկը վարկային ռիսկից պաշտպանվածության գործակիցն է: Այս ցուցանիշը բնութագրում է վարկերի հնարավոր կորուստների պահուստի հարաբերական չափը, որը պայմանավորված է վարկային պորտֆելի որակով: Վարկային ռիսկից պաշտպանվածության գործակիցն է:

$$Q_{\text{վ.ռ.}} = \frac{\text{ՎԳԿ}}{\text{ՎՔ}} : \quad (5)$$

Վարկային պորտֆելի որակը բնութագրող կարևոր ցուցանիշներ են նաև չաշխատող վարկերի պահուստով ապահովվածության գործակիցը և դասակարգված վարկերի պահուստով ապահովվածության գործակիցը: Դրանց սահմանային թույլատրելի արժեքները տարբեր են և կախված բանկի մեծությունից, մասնագիտացումից և ակտիվների

կառուցվածքից: Չվճարումների խնդիր ունեցող բանկերի համար պահանջվում է ապահովվածության ավելի բարձր մակարդակ:

Վարկերի կորստի փոխհատուցման առաջնային աղբյուր է շահույթը: Եթե բանկն ունի բավարար ընթացիկ եկամուտներ, ապա կարող է կատարել ծախսեր ընթացիկ կորուստները ծածկելու համար: Դա հաշվարկելու համար օգտագործվում է շահույթի ծածկման գործակիցը.

$$q_{c.с.} = \frac{296+4347}{494}, \quad (6)$$

որտեղ 296՝ զուտ գործառնական եկամուտներն են մինչև հարկվելը,  
4347՝ վարկերի հնարավոր կորուստների պահուստի ծախսը,  
494՝ վարկերի զուտ կորուստը:

Վարկերի հնարավոր կորուստների պահուստի ծախսերն ավելացվում են շահույթին՝ դիտարկելու համար կորուստը ծածկելու ազատ միջոցները: Այս հարաբերակցության միջազգայնորեն ընդունելի չափ է համարվում 5-14-ապատիկը:

Վարկային պորտֆելի վրա վարկային ռիսկի ազդեցության գնահատումը կարելի է իրականացնել նաև վարկային ռիսկով ճշգրտված զուտ տոկոսային մարժայի ցուցանիշի միջոցով.

$$RSU = \frac{86-85-494}{46}, \quad (7)$$

որտեղ 86՝ տոկոսային եկամուտներն են,  
85՝ տոկոսային ծախսերը,  
494՝ վարկերի գծով կորուստները,  
46՝ վարկային ներդրումները:

Այս ցուցանիշը հաշվի է առնում ինչպես վարկային ռիսկի առկայությամբ պայմանավորված կորուստները, այնպես էլ այդ ռիսկի ընդունման արդյունքում առաջացած եկամուտները:

**ЛИАНА ГРИГОРЯН**

### **СОВРЕМЕННЫЕ ПОДХОДЫ К ОРГАНИЗАЦИИ СИСТЕМЫ УПРАВЛЕНЧЕСКОГО УЧЕТА**

*Ключевые слова:* финансовый риск, финансовая стабильность, вероятность ожидаемой доходности, возможность погашения, коэффициент защиты кредитного риска, оценка риска

*В статье представлен финансовый риск, выявлен характер финансовых и нефинансовых рисков. Для анализа и оценки качества кредитного портфеля была введена система показателей, комплексный анализ которой позволяет оценить эффективность управления кредитным риском банка.*

LIANA GRIGORYAN

## DEFINING THE FINANCIAL RISK OF COMMERCIAL BANKS AS A FACTOR AFFECTING FINANCIAL STABILITY

**Key words:** *financial risk, financial stability, probability of expected returns, possibility of repayment, credit risk protection coefficient, risk assessment*

*The article presents the financial risk. To analyze and evaluate the quality of the credit portfolio, a system of indicators has been introduced, whose complex analysis allows evaluating the effectiveness of the bank's credit risk management.*

### ՏԻԳՐԱՆ ԹԵՐԶՅԱՆ

*Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների  
թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ*

## ԼԱՅՆ ԻՄԱՍՏՈՎ ՍՏԱՑԻՈՆԱՐ ԱՎՏՈՒԵԳՐԵՍԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

**Հիմնաբառեր.** *ստացիոնար ավտոռեգրեսիոն գործընթաց, ավտոռեգրեսիա, ստացիոնար գործընթաց, վիճակագրական մոդելներ, մոդելների հավանականային կառուցվածք, վիճակագրական հատկություններ, մաթեմատիկական սպասում, դիսպերսիա, սահող միջինի գործընթաց, անկախ պատահական մեծություններ, անդրադարձ բանաձևեր, գործակիցներ, բնութագրիչ հավասարում, հավասարման արմատներ*

*Աշխատանքում ցույց են տրվում այն պայմանները, որոնց դեպքում ավտոռեգրեսիոն գործընթացը հնարավոր է ներկայացնել լայն իմաստով ստացիոնար և անկախ աճերով գործընթացների անվերջ գծային կոմբինացիայի միջոցով:*

*Բացի այդ, անուղղակի կերպով ներկայացվում է ավտոռեգրեսիոն և սահող միջինի գործընթացների փոխկապվածությունը:*

*Դիտարկվում են վիճակագրական մոդելներ, որոնք ստացվում են ժամանակային շարքերից: Դրանց բնութագրիչ և առավել էական հատկությունները չեն բերվում դետերմինացված միջին արժեքների, այլ ամփոփված են մոդելների հավանականային կառուցվածքներում: Այս դեպքում չեն լինի ռեգուլյար, պարբերական պարբերաշրջաններ, և վիճակագրական հատկությունները կլինեն ոչ ռեգուլյար պատահական փոփոխություններ:*